




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԷԼ

ԱՌԹՈՂԿՈՍԱՆ

ՍԱՆԼՈՒՍ
ԳՐԱԴԱՐԱՆ
№ 22

-522-

Ա. ՄԱԼԽԱՉՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(ԳԱՏԿՍՐՆԵՐՈՎ)

ՊԵՏՂՐԱՏ

ԲԺՂՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

- 522 -

23 JAN 2018

№ 22


ՍԱՆԼՈՒՍ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 22

Ս. ՄԱԼԽՈՂՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ՐԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(ՊԱՏՎԵՐՆԵՐՈՎ)



ՊԵՏԶՐԱՏ

ԲԺՀՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1932

282

ՅԵՐԵՎԱՆԻ ԳԱՂԱՔԻ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Քաղաքի բարեկարգության ու սանիտարական դրության հետ անմիջականորեն կապված է տվյալ քաղաքի եկոնոմիկայի զարգացումը: Վորպես կոնոն պիտի դիտել, Վոր քաղաքի ֆիզիանոմիան արասցուլում է իր մեջ նրա արտադրական հարաբերությունների զարգացման պատմությունը:

Քանի աճում է արդյունաբերությունն ու զարգանում տեխնիկան, այնքան փոխվում է նրա տեսքը, ինչպես և շինությունների կառուցվածքը: Ուստի և տարեցտարի Ցերեվան քաղաքի առաջ դրվում են նորանոր պահանջներ: Համաձայն վիճակագրական տվյալների, նա իր աղգարնակչության աճման տեմպի տեսակետից, ամբողջ Միության մեջ, բռնում է պռաջնակարգ տեղերից մեկը: Դեռ ևս 1913 թվին քաղաքի աղգարնակչության թիվը հասնում էր ընդամենը 31 հազարի. աղգարնակչության չարունակական աճը, միջին հաշվով 8,5 տոկոսի (ըստ ԽՍՀՄ-ի Պետպլանի հաշվետվման), առաջին 5-ամյակի վերջում հասցնելու յե 120 հազարի:

Աղգարնակչության աճման տեմպերի մասին վկայում են հետևյալ թվերը.—

Աղգարնակչության թիվն ըստ տարիների

1913 թ.	1914 թ.	1923 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.	1929 թ.
31.000	32 000	47 521	64.613	70.104	76 100	82 600

1930 թ.	1931 թ.
89.600	100.000



1-341894

Պետերաթի տպարան.

Սրբազրեց՝ Վսկան Հակոբյան

Վատի. № 3154

Գլավլիտ. № 1964.

Տիրած 2000

Հանձնված է տպագրության 9 հոկտեմբերի 1932 թ.
ստորագրված է տպելու - « 25 » նոյեմբերի 1932 թ.

Նախապատերազմյան շրջանում, համաձայն իր եկոնոմիկայի, Յերեվանը գավառական փոքրիկ քաղաքի տպավորութիւնն էր թողնում: Նրա վրա զգացվում էր պարսկական ուժեղ ազդեցութիւնը, ուներ լաբյուրինթանման ծուռ-մուռ նեղլիկ փողոցներ ու տուպիկներ, վորոնց ուղեկցում էին այգիներն ու բանջարանոցները ջրող՝ անվերջ ձգվող առուները, իսկ այդ բոլորի մեջ ընկած կորած եյին ասիական և կիսայեւրոպական վտճով շինված հողէ տափակ կտուրներով փոքրիկ տնակներ:

Կոյուղիները կատարյալ բացակայութիւն, ջրմուղային թույլ սիստեմ, քիչ ոժանդակող ելեկտրոկայանը, արտաքնոցների անհարմարութիւն, ասիական շուկաներ, քարվանսարաններ և այլն, —հա հին, մեռնող Յերեվանի բնորոշ հատկանիշները:

Հետագա տարիներում, իմպերիալիստական պատերազմի շրջանում, Փետրվարյան հեղափոխութեան և դաշնակների կառավարութեան ժամանակ, վոչնչով չբարեկարգվեց քաղաքը. ընդհակառակն ե՛լ ավելի ծայր տվին նորանոր ավերածութիւնները:

Մինչդեռ Խորհրդային իշխանութեան ժամանակ, քաղաքը հիմնովին յենթարկվում է փոփոխութեան. հին գավառական փոքրիկ քաղաքը վեր է ամփոփում բոլորովին նոր քաղաքի, վորը պետք է համապատասխանի և բավարարի հանրապետական մայրաքաղաքի հատուկ պահանջներին: Նա, վորպես արդ.յունաբերական կենտրոններից ու վայրերից մեկը, պիտի բնականորեն, բավարարե որ որին ահող բանվորների նյութական ու մտավոր

բովանդակ պահանջներին, վորոնք աշխատում են արդ.յունաբերութեան տարբեր ճյուղերում:

Հայաստանի պրոլետարիատը, վորպես յերկրի հեղեմոն՝ իր հատուկ տեմպերով արդեն անցել է սոցիալիստական շինարար աշխատանքների: Ուստի և ստատահական հէ, վոր առաջին հերթին նա սկսեց զբաղվել իր մայրաքաղաքի վերակառուցման խնդրով. քանի վոր սոցիալիստական ծավալվող շինարարութիւնն ու արդ.յունաբերութեան արագ աճումը չէին կարող զետեղվել ուստինայի նեղ շրջանակներում պարփակվող քաղաքում:

Մանր մեղհանական գավառական քաղաքի տարածութիւնն ու պայմանները չէին կարող բավարարել այսորվա պահանջներին: Այնպես վոր մեր պրոլետարիատի առաջ իր բովանդակ հասակով ծառացավ քաղաքի հիմնովին վերապահաւորման հարցը: Առանց կանխորեն մշակված վորէն պլանի ուղղել քաղաքը, լայնացնել նրա փողոցները, նշանակում էր ե՛լ ավելի ծանրացնել քաղաքի դրութիւնը: Դեռ ավելին, քաղաքի բարեկարգման ժամանակ շատ խիստ կերպով հաշվի պիտի առնվէին ստիտարական-առողջոպահական բնույթ կրող այն հիմնական պահանջները, վորոնց առաջադրում է գիտութիւնն ամեն մի բարեկարգ քաղաքին:

Քաղաքի բարեկարգութիւնը մեծ մասամբ կախված է նրանից, թե արդ.յոք, նախ՝ վո՞ր չափով քաղաքն ապահովված է խմելի ջրով, ի՞նչ վորակի յէ այդ ջուրը և թե վորքա՞ն ժամանակ է ինչ գոյութիւն ունի ջրմուղային ցանցը. յերկրորդ՝ տեղի օերլեֆն արդ.յոք հարմարվում է կոյուղու և վոռոգման ջրերի զառիվայր հոսանքին. յերրորդ՝ վորքան հնարավորութիւններ կան եժան գնով և

լեկտրական եներգիա ունենալու՝ լուսավորության, արդյունաբերության, փոխադրական միջոցների և տնային սովորական կենցաղային կորիքների համար:

Այս բոլոր հնարավորություններով ոժտված և Յերեվանը. ունի նա լավ վերակի խմելու ջուր: Չանգու գետն առատ աղբյուր է լայնորեն ծավալելու ելեկտրոկայանների ցանցը:

Յերեվանի ռելյեֆը բռնում է բավական ընդարձակ տարածություն. հարավ-արևմտեւորում ունի թեքում, վորը խիստ նպաստավոր է ստորերկրյա գառիվայր հոսանքների և ջրմուղների համար: Բացի դա, այդ հարթությունը պայտածն չընդապատող լեռնային բարձունքները նայում են հարավ և ընկնում են արևի առատ ճառագայթների տակ. մի բան, վոր հսկայական նշանակություն ունի Յերեվանի համար: Մի քանի խոսքով կանգ առնենք քաղաքի տեղագրական և ուղեբեռնաբանական պայմանների վրա:

Չափազանց ընդունչ են քաղաքի հյուսիսում տարածվող Քանաքեռի բարձունքները. հարավի կողմում ձգված է Արաքսի լայնարձակ հովիտը:

Քաղաքն ինքը, հաշված Սեվ ծովի մակերեվույթից, գտնվում 1042 մետր բարձրություն վրա:


Քաղաքի դիրքն այնպես է, վոր գլխավորապես որվա ժամը 3-ից սկսած մինչև 6-ը (մանավանդ ամառային ամիսներին), չարունակ լենթակա չի հյուսիսից դեպի հարավ-արևմուտք փչող քամիների. այդ քամիները Քանաքեռի քաղաքից իրենց հետ քաղաք են բերում անսահման քանակությամբ փոշի: Յուրաքանչյուր դիտող, ան-

շուշտ, նկատած կլինի, թե ինչ հսկա ուժով ու քանակությամբ փոշու ամպեր են կուտակվում Ախաթայի խճուղու վրա, վորի մի մասն էլ չըջակա գյուղերից թափվող փոշիներն են, իսկ այդ փոշիների կույտերը վերջին հաշվով, քամիների միջոցով՝ Քանաքեռի բարձունքներից թափվում են քաղաք:

Սակայն ի՞նչ պատկեր է ներկայացնում ինքը քաղաքը:

Քաղաքի աճման արտասովոր տեմպը, հին շենքերի քանդումն ու նորերի կառուցումը, քաղաքի հսկասանիտարական դրուժյունը, փողոցներում թափված աղբի անժամանակ հավաքումը և այլն, այս բոլորը ստեղծում են այնպիսի դրուժյուն, վորն իրավացիորեն առաջ է բերում աշխատավորական լայն մասսաների մեջ դժգոհություններ: Մի կողմից քամիների միջոցով քաղաք թափվող փոշին, մյուս կողմից՝ քաղաքի չմաքրված ու լավ չըջրած փողոցների փոշիները և յերբորդ կողմից՝ չինարարությունների հետեվանքով ալատեղ-այնտեղ թափված աղբն ու փոշին, փչող քամիների հետեվանքով, բարձրացնում են փոշու հսկա ամպեր ու ծածկում վողջ քաղաքը փոշու թանձր մշուշով:

Փոշու աղբյուր են հանդիսանում նաև նեղ փողոցները, մասամբ նաև հարթ հողե կտուրները: Քաղաքի փողոցների մեծ մասը ծածկված է փոշու հաստ շերտով, սալահատակած փողոցներ չառքիչ ունենք, վոչ փողոցի ընդհանուր մակերեսը և վոչ էլ նրա դժային տարածությունները, ինչպես և նրանց պատրաստման յեղանակներն՝ ամենեվին չեն համապատասխանում արդի պահանջներին:



Դրությունն ավելի պարզ ցույց տալու հա-
մար, առաջ բերենք հետևյալ աղյուսակը.

Փողոցի բնօրնադր տարածութիւնը քառ. մետրերով	Խճած փողոցներն առ 1-ն հունվարի 1932 թ.	Մոտեւ և դեռ չխճած առ 1932 թ. քառ. մետ.	1932 թ-ին ստանաւ սկ- զիւտ յեն՝				Մոտեւ և չխճած առ 1-ն հունվարի 1932 թ.
			Ընդամենը	Նրանցից			
				Պատշաճ բով	Բնակարան բնակարան	Կայքով	
2,410,050	88,000	1,530,000	103,000	60,000	43,000	1,427,000	
	36,5 օ/0	63,5 օ/0	6,7 օ/0	3,9 օ/0	2,8 օ/0		

ԵԼԵԿՏՐԱՔԱՐՇԻ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ

Սալահատակման ամենաբարձր տեսակը և քիչ
փողի բարձրացնողը համարվում է ասֆալտը և
գուղըրոնապատ փողոցը: Մենք ունենք նաև բետո-
նած փողոցներ, սակայն դրանց թիվը չափազանց
աննշան է: Բետոնած փողոցների ընդհանուր մա-
կերեսը հազիվ հասնում է 1000 մ., 1.33 զգամեւոր դը-
ծալին ստորածությամբ: Շատ անգամ էն էն հետեւ քրաւս
չտակապատ փողոցները: Մեզնում ամենից շատ
ճալքարային սալահատակումն է գործածական
(տես՝ աղյուսակը): Ծիշտ է, ճալքարած սալա-
հատակումը նստում է եփան, բայց դրանով չենք
աղատվում փողոց, մանավանդ, յեթե նկատի յենք
առնում այն հսկայական շարժումը, վոր ունի
Յերեւան քաղաքը:

Բացի այդ, գյուղերից քաղաք յեկող սայլերն
իրենց անիվներով բերում են հսկայական քանա-
թությամբ կաշուն կալ ու ցելս և չսալահատակված

փողոցներով անցնելիս, խառնվում են այդ փողոցների վերին շերտերի հետ ու չորանալիս վեր են ածվում փոշու:

Գիտենք նաև, վոր մեր փողոցները տեղ-տեղ փոս ընկած են ու խորդ ու բորդ: Այնպես վոր փոս ընկած տեղերի և խորդ ու բորդությունների մեջ շատ հաճախ կուտակվում և ահագին քանակությամբ փոշի, վորն անձրեվոտ յեղանակներին դառնում և ցեխ և առաջացնում են դուրեր: Այդ պիսի պայմաններում զտնվող փողոցների ավելը առաջ և բերում փոշու հսկայական սյուներ: Յեթե այս բոլորի վրա ավելացնենք նաև այն հանգամանքը, վոր կանոնավոր չի կատարվում փողոցների մաքրումը, վոր փողոցներում կուտակված փոշին հավաքելու համար Քաղխորհրդի Կոմունալ բաժնի փոխադրական միջոցները (սայլեր, Փուրղոններ և այլն) շատ սուղ են և անբավարար, պատկերը կատարյալ կլինի:

Խոսելով փոշու մասին, չի կարելի կանգ չառնել մեր չինարարության, վորպես փոշի առաջացնող գլխավոր աղբյուրի վրա: Մեզ ուրախացնում և մեր աչքի առաջ կատարվող սոցիալիստական չինարարության հսկայական տեմպերը, դա Հայաստանի պրոլետարիատի չինարարական և ստեղծագործական կորովի, Թափի բազմաթիվ փաստերից մեկն է: Մեր պրոլետարիատը խանդավառ վողկավորությամբ վերակառուցում և զավառական փոքրիկ քաղաքը՝ դարձնելով այն խորհրդային մայրաքաղաք: Սակայն դրա հետ միասին, մեր չինարարները բոլորովին աչքաթող են անում և անտարբեր ու անկուրտուր վերաբերմունք են ցուցա-



հանում չենքերի շուրջը թափված աղբակույտերի նկատմամբ: Բնավ հող չեն տանում, չենքերի կառուցումներն ավարտելուց հետո, մատը մատի չի խփվում, չեն մաքրում չենքերի առաջ ձգված փողոցներն ու շինության շուրջը կուտակված աղբը: Մենք հեռու յենք դիտավորյալ կերպով մեղադրելու մտքից, սակայն չենք կարող չարձանագրել և չմեղադրել իշխող անտարբերությունն ու անհոգությունը:

Նոր շինարարությունների համար քաղաքի վորոշ մասերը մաքրելու և այդ դժի վրա ընկած չենքերը քանդելու համար, հաճախ քանդում են նաև ջրի հոսանքի համար փողոցի յերկու կողմերում շինված խանդակները, ծածկում շինարարական նյութերով ու աղբով և այդ ձևով նպաստում ամբողջ փողոցի և քաղաքամասի ճահճացմանը: Բազմաթիվ շինանյութեր՝ քար, ավաղ, կիր, փայտեղեն և այլն թափթփված ու չաղ տված են ուր վոր նայես, առանց կանխորեն հարմարեցնելու այդ կարևոր շինանյութերի տեղը: Սրանով հենց խանգարվում է փողոցի կանոնավոր յերթեվեկությունը: Նման փողոցներով դժվարանում է ավտոների, սայլերի, կառքերի և այլ փոխադրական միջոցների կանոնավոր անցուղարձը: Իսկ յերբ ավարտվում է չենքի կառուցումը, վոչ վոք կարծես չի ուզում հափաքել այն աղբակույտը, վոր կուտակված է չենքերի շուրջը. վոչ վոք մատը մատին չի ուզում խփած լինել, նոր կառուցված չենքի առաջ թափթփված, չոգտադործված շինանյութերը հափաքելու մի հարմար տեղ. չեն մտածում նաև ավերված, քանդված և տեղ տեղ հողակույտերով ծածկված մայթերը մաքրելու և վերանորոգելու

մատին և այդպես անխնամ վիճակի մեջ մնում են բավականին յերկար ժամանակ:

Կոմունալ Բաժինը տեղափոխման իր չափազանց աղքատիկ միջոցներով բոլորովին անուժ է, և ի վիճակի չէ՝ իր անմիջական պարտականություններից դուրս դրադիելու նաև աղբերը մաքրելու աշխատանքներով, իսկ այդ բոլորը պատճառ են դառնում մեծ քանակությամբ փոշի առաջացնելու:

Անշուշտ, նման դրությունը չի կարող ծանր կերպով չանդրադառնալ աշխատավորության առողջապահական վիճակի վրա, մանավանդ, յեթե ի նկատի առնենք հիվանդությունների այս կամ այն չափով տարածումը, վորի մեջ փոշու Փակտորը խաղում է, համենայն դեպս, նպաստող դեր: Այս կարգին վերաբերվող հիվանդությունների տարածման չափի մասին մեզ դադափար են տալիս 1930 և 31 թվականների թոքախտավոր և աչքերի հիվանդություններ ունեցողների շարժման դինամիկայում արտացոլված թվերը: Այդ թվերը թեև ճշտորեն ստուգված չեն, այնուամենայնիվ, իրր որինենտիր, տալիս են վորոշ դադափար:

1930 թվի առաջին 8 ամսում քաղաքի բուժ-հիմնարկներում ցուցակադրված են թոքախտավոր հիվանդներ՝ 3.333 մարդ, կաշվի տուբերկուլյոզով՝ 321 հոգի, 1931 թ. նույն ամիսներին՝ թոքերի տուբերկուլյոզ ունեցողների թիվը բարձրացել է 3.432-ի, իսկ մաշկի՝ 46:

Ինչ վերաբերում է աչքի հիվանդություններին, համարյա նույն ժամանակաշրջանում ունեցել ենք՝ 30 թվին 6.825 դեպք, իսկ 32 թ. 13.416:


Սյստեղից պարզվում է, թե վորքան խոշոր նշանակութուն ունի հիվանդությունների տարածման մեջ փոշին, հետևապես պրոֆիլակտիկ ձևերն արկումների մեջ աչքաթող չափաի արվի քաղաքի փոշու դեմ մղվելիք պայքարը:

Այնպես վոր, յերբ ասում ենք քաղաքի բարեկարգում, առաջին հերթին մեր առաջ ծառանում է մի խնդիր՝ վոչնչացնել փոշի առաջ բերող գլխավոր աղբյուր. այսինքն՝ աղատվել քաղաքի շրջակայաններից քամու միջոցով քաղաք թափվող փոշուց: Այս խնդրի ամենաարմատական վճիռը կլինի այն, վոր քաղաքի շրջակայքը պատեն ծառատունկերով ու անտառներով: Մասնավորապես Յերեանի հյուսիսային բարձունքների անտառապատումը պիտի պատվար հանդիսանա քաղաք թափվող փոշու ամպերի առաջ: Կարևոր նշանակութուն ունեն նաև փողոցների սալահատակման տեսակները:

Ղերջին ժամանակներս Բոլոն քաղաքում փորձեր և ուսումնասիրություններ եյին կատարվում փողոցներից բարձրացող փոշու քաղաքության վերաբերմամբ. միաժամանակ պիտի վորոշվեր փոշու քանակը, մասնիկների մեծությունը և խոնավութիւնը կամ կալցիոնի թթվութունների բաղադրությունը: Պարզվել է, վոր փոշու կոֆիցիենտ մեծ է և մաքսիմալ չափի յե հասնում գրանիտով սալահատակած փողոցներում, քան խճած, մանավանդ ասֆալտած փողոցների համար: Իհարկե, Յերեան քաղաքի համար պիտի կատարել առանձին ուսումնասիրություններ և փորձեր:

Այս խնդրով պիտի զբաղվեն՝ Սան-Հիգիենիկ ինստիտուտը, շահագրգռված տնտրողաններն ու Կոմսոտ. Ժողկամատը:

Անհրաժեշտ է նաև միանգամ ընդմիշտ լիկվիդացիայի յենթարկել քաղաքի հողե կտուրները, քանի վոր նրանք հանդիսանում են փոշու աղբյուր: Պիտի զբաղվել հողն ասֆալտով կամ այլ բաղադրությամբ փոխարինելու խնդրով: Շինարարա-



Լ Ի Ն Յ Ե Դ Ե Ս

կան կազմակերպությունների վրա պարտք է ընկնում, ինչպես վերը մատնանշեցինք, ավելի նպատակահարմար տեղեր ընտրել շինանյութերի կուտակման համար. ունենալ ավելի հոգատար և խնամատար վերաբերմունք դեպի շինարարական ավագը,

գաջր, կիրր, վորոնց մի մասը, տեղին և ասել, կոր-
չում, վոչնչանում և անցնող գարձաղների վորքերի
տակ, վորոչ մասն ել քամուց ցրվում—տարածվում
և այս այն կողմ և ստեղծում փոշու տարածման
ոժանդակ աղբյուրներ: Ամենից դրականը կլինի
կարգադրել չինարարական կազմակերպութուն-
ներին, չինարարական նյութերի մնացորդները՝
կիրր, ավազր և այլն խնամքով հավաքել և ռացիո-
նալ ոգտագործման յենթարկել:

Փոշուց պաշտպանելու հուսալի միջոցներից
մեկն և հանգիստանում, քացի իր ժամանակին փո-
ղոցները ջրելուց, ծառատնկումն ու կանաչապա-
տումը: Արհեստական պարտեզներ, ծառուղիներ՝
մայիների ամբողջ յերկարությամբ տնկված,
նույնպես և այգիներ, պարկեր. նման ձեռնար-
կումներն ողի թարմացման տեսակետից ևս ու-
նեն փոշ պակաս նշանակութուն:

Մինչդեռ մեզնում, քաղաքի կանաչապատ-
ման և ծառատնկման ու խառնուրդները տարվում են
դեռևս չաա թույլ տեմպերով:

Յեղած տարածությունը տարեցտարի կա-
տաստորոփիկ կերպով պակասում են. այս բանը
պարզ կերպով յերևում և հետևյալ աղյուսակից.

	1931 թ.	1932 թ.	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1. Կանաչատունկ տա- րածության մակերեսը (այգիների և բանջարա- նոցների) հեկտարներով	303	204	Քաղաքի լիակատար պլանավորման հետե- վանով դ՛աես վոչն չացման և յենթակա 1931 թվից մնալած 204 հեկտարից 161 հեկտարը:
2. Յուրաքանչյուր բնակ- չին միջին հաշվով ընկնում և	3 մ.	1 մ.	

Ամեն տարի չինարարական հատկացումների
համար քաղաքամասերից կտրվում են ահազին
տարածությամբ այգիներ, իսկ դրանց փոխարեն
նոր այգիների տնկումներ չեն կատարվում: Քաղ-
գործկոմի բարեկարգության բաժանմունքն իր
վրա պիտի վերցնի պակասող այգեչառ—ծառա-
տունկերի փոխարինման մեծ հոգսը և բայցևի-
կորեն իրականացնի 5-ամյակով նախատեսված
ծառատնկելային աշխատանքները: «Կանաչ տա-
րածություններ քաղաքին»—այս և խորհրդային
քաղաքների լողունգը. նա պետք և իրականութուն
դառնա:

Մեղ մոտ, Յերեվանում, պայքարը փոշու
դեմ սերտորեն կապված և քաղաքից աղբակույ-
տերը հեռացնելու գործի հետ: Մենք այստեղ քըն-
նության չառնելով առհասարակ աղբակույտերին
վերաբերող և մարդկային աղբի նպատակահար-
մար ոգտագործման կարևոր խնդիրն իր ամբողջ
ծավալով, մատնանշենք միայն, վոր համաձայն
մեր սանիտարական որդանների կողմից ներկայադ-
րած տվյալների, Յերեվանում թափած աղբի ըն-
հանուր քանակը, մի տարվա ընթացքում, հասնում
և մի քանի տասնյակ միլիոն կիլոգրամի:

Իհարկե, համաձայն բնակչության աճման, տ-
վելանում և նաև աղբի քանակը, մինչդեռ տակառ-
ներով աղտոհանման (санитизацияный обоз))
տոննաժում չի նկատվում համապատասխան ա-
ճում: Դրա հետևվումը քաղաքում կուտակվում
և ահազին քանակությամբ աղբ:

Այս տեսակետից չափազանց հետաքրքրական
են հետևյալ աղյուսակները:

1-341894

**ՅԵՐԵՎԱՆԻ ԳԱՂԱՔԻ ԱՂՏԱՀԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՂԲԱ-
ՀԱՆՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՃԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**

Տարիներ	Աղբաբանակ- չություն թիվը	Աղբահանման միջոցները			Աղտաճանա- կան փոխա- դրական մե- ջոցները
		Ցուրդոն- ներ	Տաշկա- ներ	Ավտո- նուր	
1925 թ.	54.067	15	2	2	5
1926 թ.	59.602	13	1	3	5
1927 թ.	64.699	12	1	1	5
1928 թ.	68.847	12	1	—	6
1929 թ.	75.495	12	1	—	5
1930 թ.	86.126	10	1	2	6
1931 թ.	93.877	17	1	—	5

**ԱՂՏԱՀԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՂԲԱՀԱՆՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐ-
ՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Տարիներ	Գոյացած աղտ չորհրդ թանալը	Աղտահանու- մի տակու- նուրով և կո- յուղիներով գուր և աղված	Մնացորդ	Գոյացած աղբը	Գուր և աղբ ված
1925 թ.	29930,0	9067,0	20863,0	9166,5	8212,8
1926 թ.	37632,0	9153,7	23488,3	10877,4	6402,8
1927 թ.	35422,5	9856,0	25566,5	11807,8	5985,2
1928 թ.	37689,9	10264,2	27425,7	12584,7	5289,2
1929 թ.	41333,3	11720,0	29613,3	13777,7	5289,2
1930 թ.	47156,0	11965,7	35190,3	15718,0	5846,0
1931 թ.	51397,7	12731,5	38666,2	17132,4	5721,2

Այս աղյուսակները չափազանց բնորոշ են. կո-
ճենտարիաներն այլևս ավելորդ են: Վերջին 7
տարվա ընթացքում մոտ 72,8 տոկոս միայն հե-
ղուկ աղբն է, վոր չեն կարողացել աղտահանել:
Այդ մնացորդները խիստ կերպով աղտոտում են
քաղաքի տերիտորիայի հողամասերը: Իսկ ինչ
վերաբերում է պինդ աղբին, նրա քանակը մեծ է
և բռնում է ցրված ու մեծ տարածություններ:
Գոյացած աղբի վորոշ մասը քամու շնորհիվ, մաշե-
կանց փոտներով կամ կառքերի, սայլերի ու
ֆուրգոնների անիվների միջոցով՝ ցրվում-տա-
րածվում է քաղաքի զանազան կողմերը և ել ավելի
չատայնում քաղաքի փոշին՝ լցնելով ողբ բազմա-
զան որդանական մասնիկներով:

Ինչ չեն նաև այնպիսի դեպքեր, յերբ տնտե-
րերը փողոցն են չալրտում բակերում հավաքված
աղբը: Այսպիսի փաստերն, անշուշտ, սերտորեն
չաղկապված են վերջնականապես դեռևս չկարգա-
վորված աղբի արկղների խնդրի հետ: Մյուս կող-
մից ել բացառություն չեն կազմում անկուլտուրա-
կան դեպքերը, յերբ քաղաքացիները փոխանակ
իրենց սենյակի աղբը արկղների մեջ թափելու,
չալրտում են փողոցները: Նման դեպքերն ապա-
ցույց են մեր սանիտարական անկուլտուրակա-
նության:

Մեր Գաղխորհրդի սանիտարական կազմա-
կերպությունների անմիջական պարտականությունն
է մեծ ուղադրություն հատկացնել նման խնդի-
րների վրա: Անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթա-
կիլ մեր բովանդակ ուժերը, բոլոր հնարավորու-
թյունները՝ ազդարանակչության կուլտուրական
մակարդակը բարձրացնելու և աշխատավորական

լայն մասսաների սեփականութիւնը դարձնելու
աանխտարիայի և առողջապահական տարրական
գիտելիքները: Սովորեցնել նրանց վոչ միայն պա-
հանջել, այլև կատարել:

Այս բոլորի հետ միասին քաղաքն աղտոտու-
թիւններից ու աղբակույտներից զերծ պահելու
միակ արմատական միջոցն է կոմ. տնտեսութեան
փոխադրական միջոցների ուժեղացումն ու մեքե-
նայացումը, իհարկե, չխոսելով լավագույն սիս-
տեմի, քաղաքում կոյուղի անցկացնելու գործի
մասին, վորի նախապատրաստական աշխատանք-
ներն արդեն տարվում են:

Յերեւման քաղաքի հիմնական պրոբլեմներից
մեկն է նրա վերապլանավորումը:

Քաղաքի այժմյան պայմաններում, առանց
բնակելի տարածութեան ընդլայնման ու վերջնա-
կան պլանավորման, կարող ե՛լ ավելի կրկնա-
պատկւել քաղաքի հակասանխտարական դրու-
թիւնը:

Այդ պատճառով եւ քաղաքի նոր պլանավո-
րումը խստորեն հաշիւի պիտի առնի սանիտա-
րիայի և առողջապահութեան բոլոր հիմնական
պահանջները:

Ամենից առաջ քաղաքը պիտի բաժանվի չըր-
ջանների (ոսյոնների) — վարչական, առևտրա-
կան, ֆարրիկա-գործարանային, բնակելի և այլն:
Ֆարրիկա-գործարանային շրջանը պիտի համա-
ձայնեցվի քաղաքում իշխող քամիներին, վորի
շնորհիվ՝ ծուխը, գազը և մուրը չտարածվի քա-
ղաքի մեջ, այլ քշվի քաղաքից դուրս, հեռուները:

Ապա քաղաքի բաժանումը պիտի լինի
ըստ զոնաների, ըստ զանազան բարձրութիւններ
ունեցող կառուցումների:

Կարևոր նշանակութիւն ունեն նաև փողոցնե-
րի լայնութեան, ուղղութեան և տիպային խնդիր-
ները:

Փողոցների լայնութիւնը պայմանավորված
պիտի լինի նրա գործածութեան, թե ինչ նպատա-
կի յե նա ծառայելու և նրա վրա դրւմած տների
բարձրութեան հետ: Փողոցների ուղղութիւնը
սերտորեն չաղկապված է լուսավորութեան և տը-
ների հողմահարութեան հետ, վորպեսզի դյուրին
կատարվի նրանց ոգափոխութիւնը: Տների լուսա-
վորութեան տեսակետից ոգտակար են նկատվում
այն փողոցները, վորոնց առանցքն ուղղված է
հյուսիսից հարավ: Իսկ ինչ վերաբերում է փո-
ղոցների տիպին, քաղաքի վերապլանավորման
ժամանակ, նկատի պիտի ունենալ առնվազն յեր-
կու տիպ՝ 1) փողոցներ, վորոնք ծառայելու յեն
բնակիչ փոխադրութիւնների (սայլեր, ավտո-
ներ, և այլն) համար և 2) փողոցներ, վորոնց վրա-
յով կարելի յե թույլ տալ անցնելու միայն մար-
դատար ավտոներին, կառքերին և այլն:

Սովորաբար նկատի յեն առնում և փողոցների
յերրորդ տիպը, վորը պիտի ծառայի վտարով
յերթեվեկողներին, սակայն դժբախտաբար վերջին
տիպի փողոցների իրականացման համար առայժմ
հնարավորութիւններ չկան:

Այսպիսի դասավորման դեպքում, մենք կու-
նենանք համեմատաբար ավելի քիչ թվով փողոց-
ներ, ազատ խիստ աղտոտութիւններից և փչա-

նախուց, ինչպես և գյուրին
կլինի պահպանել նրանց մաք-
րությունն ու ժամանակին
ապահովել պահանջվող վերա-
նորոգումները:

Քաղաքի սանիտարական
դրության բարձրացման և բա-
րեկարգման տեսակետից պա-
կաս գեր չի խաղում նաև փո-
ղոցների կանաչապատումը:

Ամենալավ փողոցները հա-
մարվում են այն փողոցները,
վորոնք կանաչապատ են և
ծառատունկերով հարուստ:
Փողոցների կանաչապատում
հասկապես կարևոր է սները
և լնակարանները փոշուց
պաշտպանելու համար:

Անշուշա, քաղաքի ու փո-
ղոցների կանաչապատումը
միայն զբաղվել չի սահմանա-
փակվում: Այստեղ անհրա-
ժեշտ է փոքր ինչ յերկար
կանգ առնել այս կարեւոր
խնդրի վրա:

Ամենից առաջ ծառատունկ
տարածությունները քաղաքի
համար հանդիսանում են մա-
քուր ու լի պահեստներ, թրթ-
վածնի ֆաբրիկաներ, հետե-

վապես, վորքան շատ լինեն կանաչ տարածություն-
ները, այնքան բարձր կլինի նրանց նշանակությունը
քաղաքի մթնոլորտի առողջացման գործում: Կա-
նաչապատ տարածությունները կատարում են քա-
ղաքի շնչառության օրգանների դերը:

Չափազանց պարզ է, ուրեմն, վոր քաղաքի պար-
կերին և այգիներին հատկացրված պիտի լինեն
քիչ թե շատ խոշոր տարածություններ: Դրա հետ
միասին, քաղաքի վողջ չըջապատը խիտ ծառա-
տունկերով չըջապատված լինելու դեպքում, վո-
րոնք զանազան ճյուղավորությամբ կապված են
լինելու քաղաքի կենտրոնի հետ, ապահովում են
մաքուր ու լի մշտական հոսանքը: Այդ ճյուղավոր-
ությունների միջոցով, վորպես շնչուղի—խողո-
վակներ, մաքուր ու պիտի հասցնեն ու մատակա-
րարեն քաղաքի կենտրոնական մասերին:

Ծառատունկերի նշանակությունը վաղուց են
հասկացել յեվրոպական և ամերիկական մի շարք
քաղաքներ:

Բեռլինի կանաչապատ տարածության մեծու-
թյունը հասնում է 700 հեկտարի. միայն «Տիր-
գարտեն» պարկն ունի 256 հեկտար տարածու-
թյուն: Նյու-յորքի հսկայական յարկի տարա-
ծությունն է 341 հեկտար: Այդպիսի ողտակա-
պարկերի թվին պիտի դասել նաև 110 հեկտար
տարածություն ունեցող Խարկովի, Մալինսկո-
անտառը, Մոսկվայի՝ Սախովնիկը, 164 հեկտար
տարածություն ունեցող Լենինգրադի պարկը և
այլն:

Մինչ պատերազմը, Մոսկվայում յուրա-
քանչյուր շնչին ընկնում էր 0,3 քառ. մետր կանաչ
տարածություն, մինչդեռ նույն համեմատու-

թյամբ, Լոնդոնում ամեն մի բնակչին ընկնում է 7 քառ. մետր, Բեռլինում՝ 12,7, Վիեննայում՝ 2,3, Պարիզում՝ 0,9 քառ. մետր և այլն: Ռուսական քաղաքներից համեմատաբար բարեկարգ վիճակ ունի Կիյևը, ուր մարդագլուխ ընկնում է 4,5 քառ. մետր:

Սորհրդային Մոսկվան, վերապրանավորման նոր նախագծի համաձայն, պիտի յրջափակվի ծառատունիային հսկա գոտիով: Այլ կերպ չեր ել կարող լինել. «կանաչ ֆալաֆ» լողունգը, կլկնում ենք, սոցիալիստական քաղաքի լողունգն է, քանի վոր կանաչ ծառատունիները հանդիսանում են ժամանակից քաղաքների առողջացնող պայմանների նպաստող խոշոր ազդակներից մեկը: Մակայն առանձնապես մեծ է կանաչադարձ տարածությունների նշանակությունը տաք յերկրներում գտնվող քաղաքների համար, ուր բուսականությունը վորոշ չափով մեղմացնում է սուր կլիման: Հատկապես Յերեվանի շող կլիմայի համար, քաղաքի և նրա յրջակայքի կանաչադարձման խնդիրը դառնում է սանիտարա-առողջապահական կարևոր պրոբլեմներից մեկը: Այստեղ, անշուշտ, խնդիրն եստե-տիղմի մասին չէ: Վերը հիշած ծառատունիերով բռնված տարածությունների առավելությունն ա-վելի յե բարձրանում այս տեսակետից, յերբ հաշ-վի յենք առնում քաղաքի ազդաբնակչության բնա-կան ձգտումը ե՛լ ավելի ձուլվելու բնության հետ:

Մեր բանվորների համար Փիզիկական ծանր աշխատանքից հետո, ամենախելացի ու լավ հան-դիստը կարող է լինել լավ կազմակերպված կանա-չադարձ ու ծառատունիերով հարուստ պարտեզներն ու պարկերը: Վերջապես չպետք է մոռացության

տալ գեոատի սերունդը, վորը պետք է լինի սոցիա-լիզմ կառուցող գվարդիայի շարունակողը:

Մանկական զվարճությունների, խոցերի, քա-սորոտի, մարմնամարզական վարժությունների համար մեծ պարկերը, խոշոր այգիները լավա-զույն վայրերն են նրանց առողջացման վիճակը պահպանելու համար: Նախկին մեջջանական քա-ղաք Յերեվանը, վորի բնակիչներն ապրում էյին խիստ անհատական կյանքով, կանաչների-ծառա-տունիերի մեջ լինելու իրենց ցանկությանը բա-վարարություն էյին տալիս մասնավոր սեփակա-նություն կազմող կզգիացած ու չրջափակված այ-գիներում: Ամեն տուն ուներ իր փոքրիկ պարտե-զը, ուր սեփականատերն իր ընտանիքով հովանի յեր գտնում սեփական այգու ծառերի ստվերների տակ:

Կանաչ վայրերից ոգտվելու նույն սիստեմը հատուկ է նաև մեր դավառակի համարյա բոլոր քաղաքներին: Ըստ ճարտ. Շենֆելդերի արտահայ-տության, «քաղաքը 200 տարի սրանից առաջ իրե-նից նեկայացնում էր մասնավոր այգիների մի ծով, վորոնց մեջ ցրված էյին առանձին տներ, մինչ-դեռ մեր որերի քաղաքը-դա տների ծով է, վորի մեջ գտնվում են վորոշ թվով այգիներ»:

Հասկանալի յե, վոր պրոլետարիատը բոլորո-վին այլ տակադիկա ունի քաղաքը կանաչներով ծածկելու նկատմամբ: Նրան հարկավոր են հսկա այգիներ, հասարակական պարկեր՝ ամբողջ կու-լեկտիվների հանգստի համար:

Հեռաքրքիր է այստեղ մեջ բերել 5-ամյա պլանով նախատեսված Յերեվան քաղաքի կանա-չապատման ծրագիրը: Համաձայն քաղաքի վերա-

պլանավորման, կանաչապատ ծառատունկերի
ընդհանուր տարածությունը քաղաքի սահմանում
հավասար է 161 հեկտարի, վորից փողոցներն ու-
նենալու յեն 40 հեկտար, սկիւրներ և զբոսավայ-
րեր՝ 121 հեկտար: Քաղաքի զբոսավայրերի շրջ-
թաղում գլխավորը համարվում է ողակաձև բուր-
վարը, վորն իր մեջ առնելով քաղաքի կենտրոնա-
կան մասը, յերկու ծայրերով միանում է իրար «Կո-
մունարներին» այդու մոտ: Ճառագայթաձևվ զբո-
սավայրերը կտրում են քաղաքը շրջագծից դեպի
կենտրոնը, խաղալով մի տեսակ ող հաղորդող ու-
ղիների դեր: Բացի այդ, «Սայաթ-Նովայի» անվան
գեղարվեստական պարկը, վորը տարածվում է
Չանգվի հովտի յերկու ափերով և իր մեջ է առ-
նում Գետառի ամբողջ յերկարությամբ տարածվող
ծառատունկերը. սա ևս մտնում է կանաչապատ
ընդհանուր տարածության մեջ, վորը խաղալու յե
շատ կարևոր դեր քաղաքի կենտրոնին մաքուր ող
մատակարարելու գործում. մեղմացնելու յե չոր
կլիման:

Ողն ալելի խոշոր չափով զտման յենթարկե-
յու համար, իրիստ ողտակար է կարգավորել նաև
ներքաղաքային ծառատնկումների գործը: Յերեվան
քաղաքը կանաչներով ծածկելու 5-ամյա պլանի
մասին արած ընկ.Ս. Սմբատյանի ղեկուցումից
յերեվում է, վոր յուրաքանչյուր քաղաքամասում
ծառատունկերի համար հատկացվելու յե $\frac{1}{4}$ -ից
մինչև $\frac{1}{3}$ հեկտար տարածություն, վորի շնորհիվ
միայն ներքաղաքամասային ծառատունկային տա-
րածության չափը հասնելու յե մոտ 25 հեկտարի:
Սրտաքին ծառապատ գոտու շրջանն իր մեջ է առ-
նելու Քանաքեռի բարձունքները պայտաձեմ,


Չանգու գետի մոտից. նա ընդհուպ մոտենալու յե
քաղաքի սահմաններին մինչև Գետառի հովիտը:

Այդ տարածության լայնությունը կազմելու
յե մոտավորապես 1 կիլոմետր, իսկ յերկարու-
թյունն է 35 կլմ: Հյուսիսային կողմից այդ հսկա
գոտին մոտենում է Նոր Արարկիլի սահմաններին
(Ա. Սմբատյան):

Ուշագրության արժանի յե, վոր կանաչներով
ծածկված արտաքին գոտին ունենալու յե հաստա-
տուն ծառերի տեսակներ (կաղամախի և այլն) և
հողմադիմադիր հատկություն: Տիրող քամիների
նկատմամբ ուղղահայաց դիրք ունեցող ծառերը,
զգալի չափով թուլացնելու յեն քամիների հոսանքի
ուժը, իսկ արտաքին գոտին ամբողջովին ծառա-
յելու յե, վորպես հսկայական մի Փիլտը քաղաքը՝
սպառնացող փոշուց ազատելու համար: Ընդհա-
նուր առմամբ, ամբողջ քաղաքում գտնված ծառա-
տունկերով բռնված տարածությունները պիտի
կազմեն քաղաքի համեմատությամբ 50,70%-ը:

5-ամյա պլանի համաձայն, 1933 թ. առ 1934
թիվը, քաղաքի սահմաններում բոլոր մասերի ան-
տառածղման հարցն ավարտված պիտի լինի և
բռնելու յե 478 հեկտար տարածություն:

Այսպես ուրեմն, քաղաքի բարեկարգության
նպատակով, անհրաժեշտ է՝ 1) քաղաքի վերջնա-
կան պլանավորումը՝ համաձայն տեխնիկայի, սա-
նիտարիայի և առողջապահական բոլոր պահանջ-
ների, 2) շինարարության հարցի կանոնավորումը
ու կարգավորումը, 3) ժամանակին դուրս տանել
քաղաքից աղբը և դրա հետ միասին իրականացնել
փոխադրական միջոցների մեքենայացումը, 4) քա-
ղաքի բոլոր փողոցների սալահատակում և այդ



Նոր կարուցվող Յերեվանը

փողոցների նախապես վորոշումը՝ սայլերի, կառ-
քերի և ավտոնների յերթեվեկության համար, 5)
քաղաքի կանաչապատումը:

Քանի վոր քաղաքի վերապլանավորման խըն-
դիրը համարվում է, ինչպես վերը շեշտեցինք,
առաջնակարգ կարևորություն ներկայացնող խըն-
դիրներից մեկը, անհրաժեշտ ենք համարում հա-
մառոտակի թվել այստեղ Յերեվան քաղաքի ապտ-
գա տեսքի հիմնական գծերը, համաձայն ակադեմիկ
Ս. Թամանյանի նախագծի «կանաչ քաղաքի»: Ըստ
այդ նախագծի, քաղաքը յենթարկվում է հիմնա-
կան վերակառուցման: Քաղաքի վողջ տարածու-
թյունն ընդարձակվում է և հասնում մինչև 916
հեկտարի՝ 150 հազար ազգաբնակչությամբ: Քաղաքը
բաժանված է լինելու մի քանի շրջանների, վորոնց
մեջ աչքի ընկնողներն են՝ առևտրական, արդյու-
նաբերական, համալսարանական, քաղաքամաս,
թանգարանային, սպորտային և թատրոնական,
իր մեջ առնելով ժող. տունը, կոնսերվատորիան
և գեղարվեստական ստուգիան: Վարչական շր-
ջանը պիտի գտնվի քաղաքի կենտրոնում, Փարբի-
կա-դործարանները, պահեստաշենքերի և սառցա-
տան հետ միասին, պիտի տարածվի յեկրկաթգծի
տուպիկի շրջանում, վորը զգալի հարմարություն-
ներ է ներկայացնում ձեռնարկությունների ոգտա-
կար լինելու տեսակետից:

Այս շրջանն յենթակա յե հյուսիսից հարավ
փչող քամիներին, վորոնք ուղղված են քաղաքից
դեպի արդյունաբերական շրջանը: Այս բոլոր շր-
ջանները կապված են ողակային մագիստրալնե-
րով, իրար հատող փողոցներով, վորոնք քաղաքի
կենտրոնից ձգվում են զանազան ուղղությամբ:

Նախատեսվում են յերկու տեսակի փողոցներ, մաս-
գիտորայ փողոցներ՝ 10-12 սաժեն լայնությամբ,
հարմարեցրած բեռնակիր կառքերի յերթեվեկու-
թյան: Բնակելի քաղաքամասերի փողոցների հա-
մար հաշվի չեն առնված տրանզիտային տեղափո-
խումները և դրա համար, նրանց լայնությունը հա-
վասար է 6-8 սաժ: Գլխավոր պրոսպեկտը բուլվարի
հետ միասին կտրում է քաղաքը հյուսիս-արև-
մուտյան կողմից դեպի հարավ արևելք: Պրոսպեկ-
տի այսպիսի ուղղությունը չափազանց հաջող է,
յերբ նկատի յենք առնում քամիների հոսանքը,
վորը քաղաքի կենտրոնական մասերի համար
հանդիսանում է բնական ոգափոխություն: Հար-
կավոր ուղադրություն է դարձված, ինչպես քաղա-
քի ներքին ծառադարգման, նմանապես և այլ շր-
ջանների վրա, վորոնք անմիջապես կցված են քա-
ղաքին: Կանաչների առանձին կղզիները պարփակ-
վում են կանաչապատ շրջանների ընդհանուր շրջ-
թայի մեջ:

Համաձայն վերապլանավորման նախագծի,
Յերեվանի քաղխորհրդի կողմից չափ ու ձևվի տակ
է դրված քաղաքի վերակառուցումը, տների մաք-
սիմալ բարձրությունները կենտրոնում և ծայրա-
մասերում: Քաղաքի բաժանումը տարբեր բարձ-
րություն ունեցող շենքերի, զոնաների, թույլ և
տալիս կենտրոնում ունենալու ավելի բարձր տներ,
իսկ ծայրամասերում կառուցել ցածրահարկ տը-
ներ: Այս արվում է այն նպատակով, վորպեսզի
քաղաքի ծայրամասերում գտնված շենքերն ուր-
գելք չհանդիսանան մաքուր ողի հոսանքին դեպի
քաղաքի կենտրոնները: Այս նախագիծը հաստատ-
ված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից և մաս առ

մաս արդեն իրականացվում է: Այս նախագծի ի-
րականացումը, ինչպես նաև մեր վերը հիշած մի-
ջոցառումների գործադրումը կյանքի մեջ, քաղա-
քը դնում են իր կոչման բարձրության վրա՝ սանի-
տարական առողջապահական բարեկարգման տե-
աակետից:

Քաղաքի բարեկարգման խնդրի հետ սերտորեն
չաղկապված են կոյուղու և ջրմուղու խնդիրը:

Ազգաբնակչության կուլտուրական մակարդա-
կի բարձրացման հետ միատեղ, առողջապահական
հարցերն էլ ավելի հրատապ են դարձնում վոչ
միայն վողջ քաղաքի, այլև առանձին բնակարան-
ների սանիտարական պայմանները:

Հիմնական պահանջները, վորոնք պահա-
վելու յեն աշխատավորության կենցաղի պայման-
ները, հետևյալպես նաև նրանց առողջության պահ-
պանումը, հետևյալներն յեն՝ բնակարանները պի-
տի ունենան կոյուղիներ, ջրմուղ, կանոնավոր
չինված ու հարմարեցված ռացիոնալ ջերմություն
և ոգափոխություն: Սրանք ամենահիմնական պա-
հանջներն են, վորոնք առաջադրվում են բնակա-
րաններին թե՛ սանիտարական տեսակետից, թե՛
կուլտուրական ամենատարրական պահանջների
բավարարման և թե՛ տարափոխիկ հիվանդություն-
ների դեմ (վորովայնի տիֆ, ֆորմատիկ, խոլերա,
աղիքային պալազիտներ) տարվելիք պայքարի:
Պրոֆ. Իսահակյանի կողմից հաստատված է, վոր
աղիքային հիվանդությունների մեծագույն մասը
կապված է արտաքնոցների հակասանիտարական
դրության հետ: Այստեղ մենք կոնգ չենք առնի
այն խնդրի վրա, թե ինչպիսի հսկայական վնաս
են հասցնում մեզ նահապետական ձևով չինված

արտաքնոյցները, վորոնք կազմված են մեծ մասամբ
վոչ այնքան խորր վոսերից, վորոնց մեջ յեղած
բովանդակությունը ապականում է զետինը, իսկ
վարակված հողն իր հերթին հանդիսանում է աղ-
բյուր զանազան տեսակի հիվանդությունների: Վեր-
ջին հաշվով, յեթե հաշվառում կատարենք կառա-
վարության կողմից տարափոխիկ հիվանդու-
թյունների դեմ վարած պայքարի համար Յերեվա-
նում՝ ծախսված գումարները, նաև այն աշխ. ունե-
րը, վորոնք կորչում են մեր արտադրությունից և
այս բոլորը վերածենք դրամի, կտեսնենք, վոր
քաղաքի կոյուղու կառուցման ծախսը, համեմա-
տած այն ծախսերի հետ, վորոնք լինում են կոյու-
ղու բացակայության դեպքում-կլինի շատ աննշան:

Ամբողջ քաղաքում կոյուղիներ անցկացնելու
խնդիրը, ինչպես և Քաղխորհրդի պարտադիր վո-
րոշումը՝ բոլոր աները՝ անխտիր կոյուղիների հետ
կապելը, միանգամ ընդմիջա արմատական կերպով
կլճոի քաղաքի բարեբոլոքման ամենահիմնական
հարցերից մեկը, վորը զգուշ կերպով կիջեցնի աղ-
գաքնակչության հիվանդությունների թիվը:



1

3418

193

Д-р А. Малхазян
К вопросу о благоустройстве города
Эривани

Госиздат ССРА—Се тор медизданий
Эривань.—1933

